ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ՀՈՒՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ (XV-XVII ԴԴ.)

ԲՐՈՒՏՅԱՆ Մ. Ա.

XV դարում օրավուր հզորացող Թուրքիայի և Բյուզանդական կայսրության միջև արդեն իսկ մեծացած հակակշիռը հասավ իր գագաթնակետին, որի արդյունքն էր 1453 թ. մայիսի 29-ին Կ. Պոլսի գրավումը թուրքերի կողմից: Համաշխարհային նշանակություն ունեցող Կ. Պոլսի ավերակների վրա բարձրանալու էր նոր մայրաքաղաք՝ Ստամբուլը:

53-օրյա հերոսական պաշտպանությունից հետո արտաքին աշխարհից մեկուսացած և անօգնական քաղաքն ընկավ թշնամու ձեռքը: Բարբարոսների ներխուժումն ուղեկցվեց ավեր ու կողոպուտներով, երկարատև թալանն ու սպանդը գրեթե հողին հավասարեցրին երբեմնի հրաշագեղ քաղաքը: Հույն և օտարազգի պաշտպաններից զոհվեցին 4 հազար, գերեվարվեցին 50 հազար մարդ[1]: Իրադարձությունների ականատես, ազգությամբ հույն Կրիտովուլոսը, մատնանշելով քաղաքի գրավման պատմական նշանակությունը, այն համեմատում է Տրոյայի, Կարթագենի, Հռոմի, Երուսաղեմի և այլ քաղաքների նվաճումների հետ:[2] Այս հեղինակը բազմիցս քննադատվել է իր թուրքամետության համար, սակայն դա տեղի է տալիս հույների հերոսական պաշտպանությունը նկարագրելու ժամանակ. «Հույները,- գրում է նա,- տեսնելով այսքան հսկայական ուժ, ապշած էին հարձակման ուժգնությունից, բայց նրանք փոխարենն ամեն ինչ արեցին՝ ոչ մի բան հաշվի չառնելով»[3]:

Իրադարձությունների ականատես և Կ. Պոլսի համար մղվող պայքարի մասնակից Սֆրանձին իր հուշերում գրում է, որ քաղաքի գրավման նախօրեին կայսրը ժողովրդին կոչ է անում պայքարել անձնվիրաբար և ստանում այսպիսի պատասխան. «Կզոհվենք հանուն քրիստոնեական հավատքի և մեր հայրենիքի»[4]:

Ճակատագրի բերումով հույների համար իրենց իսկ մայրաքաղաքը դարձավ հունական համայնքի կենտրոն, որը ձևավորվեց Կ. Պոլսի առումից սկսած և հետագայում շարունակված գաղթերի արդյունքում: Կ. Պոլիսը նվաճող

---

[1] *Kritovoulos. History of Mehmed the Conqueror. Princeton, 1954, p. 74.* Ս. Ռանսիմենը Կրիտովուլոսի և Լեոնարդ Քիոսացու (ըստ որի, գերիների թիվը 60 հազար է) հաղորդած տեղեկությունները համարում է չափազանց, քանի որ, ըստ նրա, ողջ բնակչության թիվը դժվար թե գերազանցած լիներ 50 հազարը *(Рансимен С., Падение Константинополя в 1453 г. М., 1983, с. 187).* Հիշատակարաններից մեկի համաձայն՝ հույներից 10 հազար հոգի է զոհվել (ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. մասն Բ (1451-1480), կազմ. **Խաչիկյան Լ. Ս.,** Ե., 1958, էջ 30):

[2] *Kritovoulos*, նշվ. աշխ., 78, 79:

[3] Նույն տեղում, էջ 38:

[4] *Византийские источники Дука и Франдзи о падении Константинополя (перевод и предисловие* **Степанова А. С**.*) (Византийский временник, М., 1953, N 7, с. 425).*

Մեհմեդ II Ֆաթիհի արձակած ֆերմանի համաձայն՝ հույները կարող էին վերադառնալ իրենց տները: Նրանց կյանքն ու ունեցվածքը համարվում էր անձեռնմխելի, որոշ ժամանակ նրանք ազատվում էին հարկերից: Ինքնակամ հանձնված թաղամասերը զերծ մնացին ավերից ու կողոպուտից: Հնազանդ բանտարկյալներին նա ազատ արձակեց, տեղավորեց Ֆեներ թաղամասում և երկար ժամանակ ազատեց հարկերից[5]: Ճոխ ու գեղեցիկ քաղաք կառուցելու համար նա պիտի օգտագործեր քրիստոնյա արհեստավորների՝ հատկապես հույների աշխատուժը, սակայն տեղաբնակ հույները մեծ մասամբ արտագաղթել կամ սպանվել էին, ուստի հարկավոր էր վերաբնակեցնել նրանց[6]: Հայտնի չէ Մեհմեդ II-ի կատարած առաջին բռնագաղթի տարեթիվը: Հունական մի քանի աղբյուրների վկայությամբ բռնագաղթերը սկսվել են հենց Կ. Պոլսի առման տարուց և շարունակվել շատ տարիներ[7]: 1454-1455 թթ. Սերբիայի դեմ պատերազմից վերադառնալիս Մեհմեդ II-ը 4 հազար գերիներ բնակեցրեց Կ. Պոլսի շրջակա գյուղերում: Դրանք հույներ էին, սերբեր և տարբեր ազգերի քրիստոնյաներ[8]:

Մեծ քանակությամբ հույներ վերաբնակեցվեցին Սև ծովի շրջաններից և Էգեյան ծովի կղզիներից: 1456 թ. Մեհմեդի տիրապետության տակ անցան հունական Էնոս, Թասոս, Սամոթրակե կղզիները, Լեմնոսի բնակչությունն ինքնակամ հանձնվեց օսմանցիներին՝ խոստանալով հարկատու լինել[9]: 1457-1458 թթ. Կոստանդնուպոլիս գաղթեցին Կորնթոսի հունաբնակ շրջանի բնակիչները, որոնք հաստատվեցին քաղաքի արվարձաններում[10]:

Երբ 1459 թ. Մեհմեդը վերադարձավ քաղաք, սկսեց զբաղվել այն բարեկարգելու գործով: Առաջին հերթին նա Կ. Պոլսում վերաբնակեցրեց իր հետ բերած պելոպոնեսցիներին: Նրանք, ովքեր հմուտ էին առևտրում, բնակեցվեցին քաղաքի կենտրոնական մասերում, մի մասն էլ տեղ գտավ գյուղերում, ստացավ սերմ ու լծկաններ՝ հողագործությամբ զբաղվելու համար[11]: 1460 թ. Ամասրայի հանձնվելուց հետո մայրաքաղաք տեղափոխվեցին ոչ միայն հայեր, հույներ, այլև հրեաներ ու սերբեր: Տեղահան

---

[5] *Kritovoulos,* նշվ. աշխ., էջ 93: *Inalcik H.., The Ottoman Empire. The Classical Age. 1300-1600. New York – Washington, 1973, p. 140:* Ս. Ռանսիմենը չի նշում, թե դա Մեհմեդ II-ի որ ֆերմանն է Կոստանդնուպոլսի գրավումից հետո (***Рансимен С,*** նշվ. աշխ., *135*): Սա հավանաբար այն ֆերմանն է, ուր խոսվում է Դալաթիայի ինքնավարության մասին (**Успенский Ф. И.,** *История Византийской империи, М. - Л., 1948, с. 778).*

[6] *Μεγαλη Ελληνικη Εγκυκλοπαιδεια, τομοσ 10. Α η να, σ. 292.*

[7] **Βακαλοπουλοσ Α.,** *Νε α Ελληνικη Ιστορια. εσσαλονι κη, 2003, σ. 47.*

[8] *Византийские источники Дука и Франдзи…, с. 409.*

[9] ***Այվազովսկի Գ.***, Պատմութիւն Օսմանեան պետութեան, Ա.Վենետիկ, 1841, էջ 160:

[10] Կրիտովուլոսը, կորնթացիների գաղթի մասին խոսելով, ասում է. «Մեհմեդը բերեց նրանց, լրիվ անվնաս, ուրիշ վայրերից», սակայն չի հիշատակում, թե ովքեր և որտեղից են «նրանք» (*Kritovoulos,* նշվ. աշխ., էջ 136):

[11] Կրիտովուլոսը չի նշում, թե հատկապես որ թաղամասերում բնակվեցին պելոպոնեսցիները (*Kritovoulos,* նշվ. աշխ., էջ 139): Ըստ Ա. Դ. Նովիչևի՝ Պելոպոնեսից բերված գերիների թիվը հասնում էր 4 հազարի (**Новичев А. Д.**, *Рабство в Османской империи в средние века (Проблемы социальной структуры и идеологии средневекового общества (межвузовский научный сборник), вып. 2, Л., 1978, с. 66).*

արվեցին Ադրիանուպոլսի, Ֆիլիպոպոլսի, Գալիպոլիի բնակիչները, մեծ մասամբ արհեստավորներ ու առևտրականներ, որոնք կարճ ժամանակում հարստացան՝ հաղթահարելով իրենց մրցակիցներին[12]:

1461 թ. Տրապիզոնի նվաճմամբ դադարեց հունական թագավորության գոյությունը: Պետականությունից զուրկ հույները մի շարք քրիստոնյաների նման հանձնվեցին բախտի քմահաճույքին: Տրապիզոնցի 800 տղաներ ենիչերի դարձվեցին: Մեծ ավարի ու կողոպուտի հետ Կ. Պոլիս բերվեցին տրապիզոնցի 1500 գերիներ, որոնց մեջ էր նաև Դավիթ թագավորի դուստր Աննան[13]:

Մինչև 1464 թ. Մեհմեդ II-ը մեծաթիվ հույների Կ. Պոլիս է տեղափոխել Միտիլենայից, Մորեայից, Կարամանից, Իկոնիայից, Լարենդայից, հաստատել քաղաքում, մի մասին տներ տվել, մյուսներին հողեր՝ տներ ու կացարաններ կառուցելու համար[14]: Ըստ հունական աղբյուրների՝ 1468-1474 թթ. դեպի Կարաման արշավանքի ժամանակ Մեհմեդը մեծաթիվ հույն, հայ, հրեա, թուրք բնակիչներ է բերել Կոստանդնուպոլիս: Մեծ բռնագաղթ է իրականացվել 1479 թ.: Կա կարծիք, որ երկար ժամանակ կարամանցիների ինքնակամ հոսք է եղել դեպի Կոստանդնուպոլիս: Գաղթածների մեծ մասը հույներ էին, հետո՝ հրեաներ, ավելի քիչ՝ հայեր[15]: Ըստ Էվլիյա Չելեբու՝ Զմյուռնիայից բերված հույները բնակվել են Բյոյուք Ղալաթայում:[16]

1475 թ. հունիսի 5-ին Կաֆա ներխուժած թուրք զինվորները ահ ու սարսափ տարածեցին ամենուր՝ ստիպելով հանձնվել պաշտպանությունից ուժասպառ և դավաճանությունից հուսահատ եղած բնակչությանը: Պաշտպաններից 40 հազար մարդ գերեվարվեց ու տեղափոխվեց Կ. Պոլիս, հարյուրավոր տղաներ ենիչերի դարձվեցին[17]:

---

[12] *Kritovoulos,* նշվ. աշխ., էջ 148:

[13] **Ροδακησ Π.,** *Ιστορια του Ποντου. τομοσ 1. Γορδιοσ, 1998, σ336* (*Рансимен С.,* նշվ. աշխ., էջ 156):

[14] **Βακαλοπουλοσ Α.,** նշվ. աշխ., էջ 47:

[15] Նույն տեղում, էջ 48: Կարամանցիների 1479 թ. գաղթի մասին է հիշատակում գրիչ Մարտիրոսը (***Թորգոմյան Վ.,*** Հիշատակարան Ամիրտովլաթա Սաղմոսին (Հանդես ամսօրյա, 1895, N 8, էջ 247): **Այվազովսկի Գ.**, նշվ. աշխ., էջ 183-184: *Армянские хронисты о падении Константинополя, подготовил к изданию А. С. Анасян, перевод с древнеармянского С. С. Аревшатяна (Византийский временник, N 7, М., 1953, с. 458).*

[16] ***Ապաճյան Գ.,*** Ո՞ւր և ինչպե՞ս զետեղուեցան գրաւումեն վերջ Իսթանպուլ բերուած հայ գաղթականները. (Շողակաթ, 1953, էջ 258):

[17] Հայ-իտալական առնչություններ. ջենովական փաստաթղթերը ղրիմահայերի մասին. (կազմ., առաջաբանը և ծանոթագր. ***Վ. Ա Միքայելյանի***), Ե., 1974, էջ 153: ***Միքայելյան Վ.,*** Ղրիմի հայկական գաղութի պատմություն, Ե., 1964, էջ 274: **Գ. Այվազովսկին** նշում է, որ Մեհմեդ II-ը Կոստանդնուպոլիս է տեղափոխել ավելի քան 40 հազար հայեր և ջենովացիներ, 1500 պատանիներ ենիչերի են դարձվել (***Այվազովսկի Գ.,*** նշվ. աշխ., էջ 198): Անկասկած, այդ 40 հազարի մեջ եղել են նաև հույներ, քանի որ Վ. Միքայելյանի ներկայացրած փաստաթղթերից երևում է, որ Կաֆան վաղուց ի վեր հունաբնակ է եղել: Կաֆայից բերված հույների մասին տե՛ս **Μεγαλη Ελληνικη Εγκυκλοπαιδεια***, τ. 17, σ. 952:* Մ. Օրմանյանը ևս նշում է կաֆացիների գաղթի մասին (***Օրմանյան Մ.,*** Ազգապատում, հ. Բ, Բեյրութ, 1960, էջ 2185):

Քայլ առ քայլ իրականացնելով Կ. Պոլիսը վերաբնակեցնելու և վերակառուցելու իր ծրագիրը՝ Մեհմեդ II-ը մեծապես հենվում էր հույն, հայ ու հրեա արհեստավորների և առևտրականների վրա։

Երկարատև գաղթերի հետևանքով Կ. Պոլսի բնակչությունն ավելացավ։ 1470–ական թվականներին այն բնակեցված էր մոտ 16 հազար 384 ընտանիքներով, որոնց գրեթե կեսը մուսուլմաններ էին, քառորդ մասը՝ հույներ, մնացածը՝ հայեր, հրեաներ, գնչուներ և այլն[18]։ Բնակչության թվաքանակի մասին կարևոր տեղեկություններ են հաղորդում 1477-1478 թթ. վիճակագրական տվյալները, որոնք վերցված են հարկացուցակներից։ Դրանք, սակայն, մոտավոր են, քանի որ հարկացուցակներում ընդգրկվում էին միայն այլ տղամարդիկ՝ ընտանիքի գլխավորները և հարկատուները։ Հաշվառումից դուրս էին մնում քոչվոր ընտանիքները, ստրուկները, հոգևոր ու ռազմական առաջնորդները և պաշտոնյաները, որոնք ազատված էին հարկերից, ինչպես նաև այն գյուղացիները, որոնք, հարկերից խուսափելով, ցուցակներում չէին ընդգրկվում[19]։

Հույն ժողովրդի համար, ինչպես նշվեց, իրենց իսկ մայրաքաղաքը դարձավ համայնքի կենտրոն, տարբեր ազգությունների և կրոնական տարբեր դավանանք ունեցող խմբերի հանրագումար, ուր կողք կողքի ապրում էին նախկին բարձրաստիճան պաշտոնյաները, գերիները, առևտրականներն ու արհեստավորները։ Գերեվարված հույների մեծ մասը, հատկապես նրանք, ովքեր քաղաք բերվեցին Տրապիզոնի գրավումից հետո, եկան իրենց ունեցվածքով ու հաստատվեցին քաղաքի կենտրոնական մասում։ Հատկապես հույներով էր բնակեցված Ֆեներ թաղամասը։ Հարուստ հողատերերի՝ ֆանարիոտների թիվն աստիճանաբար մեծացավ, քանի որ Մեհմեդ II-ը շատ հույների տվեց բարձր պաշտոններ, գեղեցիկ տներ ու տարածքներ՝ նավամատույցների երկայնքով[20]։ Սա, ըստ երևույթին, չի բխել Մեհմեդ II-ի հունասիրությունից։ Պարզապես նա, ազդեցիկներին ու հեղինակավորներին

---

[18] Հայտնի է, որ Մեհմեդ II-ը թագադրվել է երիցս, առաջին անգամ՝ 1444 թ., իսկ վերջնականապես՝ հոր մահից հետո՝ 1451 թ.։ *Ապաճյան Գ.*, Բիւզանդիոն եւ իր քաղաքական ու զինվորական կացությունը գրավում են առաջ (Շողակաթ, 1953, էջ 125)։ Ս. Շոուն նշում է, որ Մեհմեդի թագադրման տարիներին բնակչության թիվը 16 հազար 784 էր։ Անշուշտ, խոսքը Կոստանդնուպոլիսը գրավելուց հետո կատարված հաշվառման մասին է, քանի որ նրա նշած բնակչության թվաքանակը համընկնում է 1477-78 թթ. կատարված ցուցակագրման արդյունքների հետ *(Shaw S., History of the Ottoman Empire and Modern Turkey, USA, 1917, p. 60):*

[19] ***Ապաճյան Գ.***, Հայերու անվամբ կազմված առաջին թաղեր եւ իսթանպուլահայ բնակչությունը գրավման հաջորդող տարիներուն մեջ (Շողակաթ, 1954, N 4, էջ 92)։ Ա. Նովիչևը, ուսումնասիրելով վիճակագրական տվյալների վերաբերյալ Օ. Բարկանի և Ս. Շնայդերի հաղորդած տեղեկությունները, համոզվել է, որ դրանք բերված են միևնույն փաստաթղթից (**Новичев А. Д.**, *Население Османской империи в XV-XVII вв. (Вестник Ленинградского университета, N 14, М., 1960, с. 31):* Բնակչության թվաքանակի մասին Հ. Ինալջիկի հաղորդած տվյալները համընկնում են Օ. Բարկանի տվյալներին, մի տարբերությամբ, որ վերջինս ընդհանուր է հաշվառել քրիստոնյաներին և ոչ մուսուլմաններին, իսկ Հ. Ինալջիկն առանձնացրել է հույներին, կարամանցի հույներին, հայերին, գնչուներին և այլն (*Inalcik H., նշվ. աշխ., էջ* 141).

[20] **Βακαλοπουλοσ Α.,** նշվ. աշխ., էջ 45, 46։

որոշ արտոնություններ տալով, ցանկացել է նրանց միջոցով իրեն ենթարկել համայնքը՝ հնարավորինս ձգտելով կանխել հունական դիմադրական շարժումները: Վիճահարույց է Մ. Օրմանյանի, Հ. Սիրունու, Հ. Անասյանի այն տեսակետը, որ Մեհմեդ II-ը Կ. Պոլիս է բերել և բնակեցրել մեծաքանակ հայերի՝ ի հակակշիռ հույն տարրի: Ջանազան թվական տվյալները վկայում են, որ Մեհմեդ II-ի ժամանակ թուրքերն արդեն թվաքանակով կրկնակի գերազանցել էին հույներին, որոնք միայն հոգևոր առաջնորդ ունենալով, որևէ քաղաքական ազատությունից զուրկ՝ չէին կարող այն աստիճանի լուրջ խոչընդոտ լինել թուրքական իշխանության համար, որ ի հակակշիռ հույների՝ այստեղ բերվեին և բնակեցվեին հայեր[21]: Հունական Մեծ հանրագիտարանը տարբեր վայրերից հույների տեղափոխման փաստը բացատրում է նրանով, որ բարբարոս թուրքը պիտանի էր միայն նվաճումների համար, իսկ հույն բնակչությունը նպաստելու էր պետության բարգավաճմանը, արհեստների և առևտրի զարգացմանը[22]:

Մեհմեդ II-ի կողմից կարևոր քայլ էր հայ, հույն, հրեա միլեթների ճանաչումը՝ որպես կայսրության ներսում կրոնական հասարակություն՝ իրենց հոգևոր ղեկավարի իշխանության տակ: Օսմանյան կայսրությունում ոչ մահմեդական միլեթները դավանական հարցերում ենթակա էին հոգևոր առաջնորդին, որը պատասխանատու էր կենտրոնական իշխանությանը և որպես նվաճվածներ՝ մասնակցություն չունեին քաղաքական իշխանության մեջ: «Անհավատ» տարրերին մի հայտնի չափով հոգևոր և աշխարհիկ իշխանություն տալով և նրանց առաջնորդներին իրեն հպատակեցնելով՝ Մեհմեդը ձգտում էր միլեթների համակարգը ծառայեցնել իր նպատակներին[23]:

Մեհմեդ II-ը հույների պատրիարք նշանակեց Գենադիոս Սքոլարիոսին[24]: Դրանով նա կարողացավ օգտագործել եկեղեցու ազդեցությունը քրիստոնյաների վրա՝ իր ձեռքին պահելով ուղղափառ համայնքը կառավարելու լծակները: Նվաճված մայրաքաղաքի առաջին պատրիարքը եղել է իր ժամանակի ճանաչված մտավորական՝ փիլիսոփա, աստվածաբան, մեծ գիտնական, որին հույները հիշում են որպես մի գործչի, որն ամբողջ կյանքում պայքարել է իր ազգի բարօրության համար և ստացել «Սուրբ» հորջորջումը[25]: Հայտնի է Սքոլարիոսի ընդդիմադիր կեցվածքը Հռոմի հետ՝ բյուզանդական եկեղեցու մերձեցման հարցում: Ֆաթիհը պատահաբար չէր ընտրել նրան և այդ ակտով կանխում էր հույների ու իր ակնհայտ թշնամու՝ պապի (Եվրոպայի) երկխոսության հնարավորությունները: Իր իմաստությամբ Սքոլարիոսը

---

[21] Հ. Պերպերյանը, հենվելով սկզբնաղբյուրների և վիճակագրական տվյալների վրա, հերքում է վերոհիշյալ հեղինակների տեսակետը (***Պերպերյան Հ.***, Իսթանպուլի հայ բնակչությունը քաղաքին գրավումեն մինչեւ Ֆաթիհ Մեհմեդ Բ-ի մահը, Հանդես ամսօրյա, 1962, N 1-4, էջ 214-216):

[22] *Μεγαλη Ελληνικη Εγκυκλοπαιδεια, τομος 10, σ. 292.*

[23] **Kinross L.**, *The Ottoman Centuries, London, 1977, p. 112,* **Braude B.**, *Foundation Myths of the Millet System. In: Christians and Jews in the Ottoman Empire, vol. 1, New York-London, 1982, p. 69.*

[24] **Kritovoulos**, *նշվ. աշխ., էջ 94:*

[25] *Μεγαλη Ελληνικη Εγκυκλοπαιδεια, τομος 8, σ. 198.*

պատկառանք էր ազդում Մեհմեդին և նրա շրջապատին, որոնք, ինչպես հայտնի է, եվրոպացիների առջև ձգտում էին ցուցադրել այն, որ նվաճողը կարող է հակումներ ունենալ արվեստների, գիտության ու իմացության նկատմամբ: Գենադիոսի պատրիարք հռչակվելով, փաստորեն, Կ. Պոլսում հույն համայնք էր ձևավորվում՝ հոգևոր առաջնորդի ղեկավարությամբ:

Ֆ. Ուսպենսկին նշում է, որ Մեհմեդ II-ն արդեն Կ. Պոլսի գրավման երրորդ օրը վերականգնել է ուղղափառ պատրիարքությունը՝ պատրիարք նշանակելով Սքոլարիոսին[26]: Ա. Լեբեդևի կարծիքով պատրիարքի ընտրությունը ոչ թե երրորդ օրն է կատարվել, այլ Կ. Պոլսի գրավումից մեկ տարի անց, երբ Մեհմեդ II-ը քաղաք բերեց Էգեյան ծովի կղզիներում և Սև ծովի շրջաններում բնակվող հույներին, Բուրսայում բնակվող հայերին ու Աքսարայի թուրքերին[27]: Ռանսիմենը չի խոսում պատրիարք նշանակելու ժամանակի մասին՝ նշելով միայն, որ որոշ տատանումներից հետո Սքոլարիոսը համաձայնվեց ընդունել պատրիարքի պաշտոնը, իսկ օծման արարողությունը եղավ 1454 թ. հունվարի 6-ին[28], ըստ Կրիտովուլոսի՝ նույնպես 1454 թ.[29]: Ըստ հունական Մեծ հանրագիտարանի՝ դեռևս 1453 թ. աշնանը Սքոլարիոսին առաջարկվել է պատրիարքի պաշտոնը, սակայն նա պաշտոնավարել է 1454-1464 թթ.[30]: Ճշմարտությանը մոտ է թվում այն տեսակետը, որ Մեհմեդ II-ը պատրիարք է նշանակում Սքոլարիոսին, որպեսզի խրախուսի այն քրիստոնյաներին, ովքեր խուսափում էին վերադառնալ ու հաստատվել Կ. Պոլսում[31]: Կարելի է եզրակացնել, որ դեռևս 1453 թ. սուլթանը պատրիարք նշանակելու ծրագիր ուներ, քանի որ դա, իսկապես, կխրախուսեր թե՛ մայրաքաղաքում, թե՛ այնտեղից դուրս բնակվող քրիստոնյաներին: Սքոլարիոսին պատրիարք նշանակելը նպատակային էր, սակայն դրա համար ժամանակ էր հարկավոր: Պանտոկրատորի վանքում գտնվող Գենադիոսը գերեվարվել էր և տարվել Ադրիանուպոլիս և դրանից հետո միայն Մեհմեդ II-ի հրամանով բերվել Կ. Պոլիս[32]: Ուրեմն Մեհմեդ II-ը կա՛մ անձամբ է ճանաչել Սքոլարիոսին (ինչի մասին հիշատակում են ականատեսները ճիշտ այնպես, ինչպես հայերի պատրիարք Հովակիմի կապակցությամբ), կա՛մ լսել է նրա մասին: Հայտնի է, որ Մեհմեդ II-ը Ադրիանուպոլսից վերադարձել է 1453 թ. ուշ աշնանը և միայն դրանից հետո զբաղվել մայրաքաղաքի ներքին հարցերով[33]: Ուստի տրամաբանական է, որ Մեհմեդ II-ի և Սքոլարիոսի մի քանի հանդիպումները,

---

[26] **Успенский Ф. И.,** *История Византийской империи, т. III, М., 1958, с. 794.*

[27] Նույն տեղում, էջ *795:*

[28] **Рансимен С.,** *նշվ. աշխ., էջ* 139: Ըստ Հ. Սիրունու՝ Սքոլարիոսը պատրիարք է օծվել 1453 թ. հունիսի 3-ին (***Սիրունի Հ. Ճ.,*** Պոլիս և իր դերը, Պեյրութ, 1965, էջ 209):

[29] **Kritovoulos,** *նշվ. աշխ., էջ* 94: Սքոլարիոսի պատրիարք նշանակման մասին տե՛ս ***Չամչյան Մ.***, նշվ. աշխ., էջ 500, ***Այվազովսկի Գ.,*** նշվ. աշխ., էջ 154, *Ալպոյաճյան Ա.,* Կազմաւորություն արեվմտահայության (Շողակաթ, 1962, N 2, էջ 22 և այլն. Մ. Չամչյանը և Գ. Այվազովսկին Սքոլարիոսի նշանակման տարեթիվը համարում են 1453-ը):

[30] *Μεγαλη Ελληνικη Εγκυκλοπαιδεια, τομος 8, σ. 197.*

[31] Այս տեսակետն առաջ է քաշում Հ. Ինալջիկը. (**Inalcik H.,** *նշվ. աշխ., էջ* 236):

[32] **Рансимен С.**, *նշվ. աշխ., էջ* 138:

[33] **Kritovoulos**, *նշվ. աշխ., էջ* 89:

զրույցները ժամանակ էին ենթադրում, և պատրիարքի նշանակումը պետք է լիներ 1454 թ.:

Հունական միլեթի ճանաչումը և հույն պատրիարքի նշանակումը կարևոր նշանակություն ուներ Թուրքիայում ապրող հույների և մյուս քրիստոնյաների համար: Ըստ Սֆրանձիի՝ սուլթանը և պատրիարքը համատեղ մշակել են նոր օրենքներ, համաձայն որոնց և պատրիարքին տրված գրավոր փաստաթղթի՝ Մեհմեդը նրան խոստացել է անձեռնմխելիություն, հարկերից ազատում, ինչպես նաև ազատ տեղափոխության ու արտոնությունները սերնդեսերունդ փոխանցելու իրավունք: Քրիստոնյա եկեղեցին իրավունք ուներ թաղման, ամուսնական ծեսերի կազմակերպման[34], Զատկի արարողության ու եռօրյա տոնախմբությունների կազմակերպման, որի ժամանակ հունական ֆեներ թաղամասի դարպասները երեք գիշեր բաց էին մնալու[35]: Մեհմեդի կողմից հույներին շնորհված այս վերջին արտոնությունները պատճառ դարձան հայ-հունական հարաբերությունների հետագա սրման, մասնավորապես Զատկի տոնախմբության շուրջ տարաձայնությունների («Ծռազատիկ») հարցում:

Բնակչությունից հարկեր էր հավաքում տեղական կառավարությունը, և ուղղափառ եկեղեցու գլուխը ամեն կերպ նպաստելու էր դրան: Այս արտոնությունների հետ միասին սահմանափակվում էին «անհավատների» իրավունքները: Իսլամի և շերիի գերակայության ուժով ոչ մահմեդականներն օսմանյան հասարակությունում ստանում էին երկրորդական հպատակի կարգավիճակ: Նորաստեղծ պետությունը պիտի լիներ իսլամի տիրապետող դիրքով և բազմազգ, որին ենթարկվելու էր քրիստոնյա եկեղեցին: Իսլամի իշխանության տակ պիտի գործեին հույն ուղղափառ պատրիարքը, հայերի հոգևոր առաջնորդը, հրեաների ռաբբին (խախամապետը): Կրիտովուլոսը հիշատակում է հունական և հրեական միլեթների ճանաչման մասին՝ նշելով, որ հրեական համայնքի ղեկավար է նշանակվել Մոսես Կապսալին: Եվրոպայից բերված մեծաթիվ հրեաները 25 տարվա ընթացքում իրենց թվաքանակով պիտի դառնային երրորդը մայրաքաղաքում՝ մուսուլմաններից և հույներից հետո[36]: Իրողություն է հրեական միլեթի ճանաչումը, քանի որ մեծաթիվ համայնքը պիտի իր առաջնորդն ունենար: Սակայն հայտնի չէ այս միլեթի ճանաչման տարեթիվը:

1461 թ. Մեհմեդ II-ը Բուրսայի հայ համայնքի եպիսկոպոս Հովակիմին նշանակեց պոլսահայ գաղութի հոգևոր առաջնորդ[37]: Այս իրադարձության մասին Կրիտովուլոսը ոչինչ չի հիշատակում: Միակ սկզբնաղբյուրը Մ. Չամչյանն է, որը տեղեկությունը քաղել է Մաղաքիա դպիր Ճեվահիրճյանի հաղորդած տվյալներից, ըստ որի Մեհմեդ II-ը Բուրսայի ժողովրդի հետ միասին բերել է Հովակիմին, իր նախօրոք խոստման համաձայն[38]: Եթե Մ.

---

[34] **Kritovoulos**, *նույն տեղում, էջ* 94-95:

[35] **Babinger F.**, *Mehmed the Conquerer and His Time, Princeton - New Jersey, 1978, p. 104.*

[36] **Kinross L.**, *նշվ. աշխ., էջ* 117:

[37] ***Չամչյան Մ.***, նշվ. աշխ., էջ 500:

[38] ***Պերպերյան Հ.***, Կ. Պոլսոյ հայ պատրիարքներու գավազանագիրքը՝ ըստ Մաղաքիա դպիր Ճեվահիրճյանի (Հանդես ամսօրյա, 1963 թ., N 7-9, էջ 326-342):

Ճեվահիրճյանի հաղորդած տեղեկությունը ճիշտ է, ապա Մեհմեդ II-ը Հովակիմին գիտեր դեռևս Կ. Պոլսի գրավումից առաջ և լավ հարաբերությունների մեջ էր նրա հետ[39]: Պատրիարքի նշանակումը կարևոր ու մեծ հանգամանք էր, որը պիտի իր արձագանքն ունենար: Սակայն ժամանակի հեղինակները և իրադարձությունների ականատեսները լռում են սրա մասին: Հետագա հեղինակները հարցին մոտենում են զգուշությամբ: Այդ մասին են վկայում Մ. Օրմանյանի օգտագործած «փաթրիք» և «հոգևոր պետ» արտահայտությունները: Ֆ. Բաբինգերը նշում է. «Եթե ճիշտ է որոշ պատմաբանների պնդումը, սուլթանը Հովակիմին տեղափոխել է Բուրսայից, հաստատել՝ որպես գերագույն գլուխ կայսրության բոլոր հայ քրիստոնյաների»[40]:

Հովակիմի մասին աղբյուրների բացակայությունը կարելի է բացատրել Կ. Պոլսում բռնկված հաճախակի հրդեհներով: Ե. Քյոմուրճյանը հիշատակում է 1645 թ. Գումգափուի հրդեհը, որի պատճառով այրվել են հայկական և հունական եկեղեցիները[41]: 1641 թվականից Կ. Պոլսի հայ պատրիարքի նստավայրը Գումգափուում էր, ուստի, հավանաբար, կարևոր փաստաթղթերը այրվել էին այս կամ այն հրդեհի պատճառով: Հովակիմի պարագայում մոլորեցնող է «պատրիարք» բառը, որը բառացի նշանակում է «հայրապետ»՝ հոգևոր առաջնորդ: Հավանաբար XV դարի հիշատակագիրները «հայրապետը» թարգմանել են «պատրիարք»[42] բառից: Պատրիարքության առաջացման, նրա անվան խնդիրներին անդրադառնալով՝ հետազոտողը նշում է[43]. «Այն, որ հայերեն հայրապետ պատվանունը բառացիորեն պատճենված է հունարեն պատրիարք բառից (պատրի-հայր, արքիս-պետ) գայթակղիչ է՝ տեղիք տալով կարծելու, որ հիշատակարանների հեղինակները, XV դ. հայրապետ ասելով, նկատի են ունեցել պատրիարք տիտղոսը»[44]:

---

[39] Ըստ Բաբգեն եպիսկոպոսի՝ Հովակիմը որպես Կոստանդնուպոլսի հայության առաջնորդ է հիշատակվում դեռևս 1438–ին (*Բաբգեն Եպիսկոպոս*, Կ.Պոլսի հայ պատրիարքության ծագումը և առաջին պատրիարք Հովակիմ արքեպիսկոպոսը (Հանդես ամսօրյա, 1924, N 9-10, էջ 441), սակայն Հ. Տեր-Անդրեասյանը, հիմք ընդունելով «Ամիրտովլաթին սաղմոսը» հիշատակարանը, գրված 1459 թ., գալիս է այն եզրահանգման, որ Մ. Չամչյանը սխալվել է՝ Հովակիմին համարելով առաջին պատրիարք, իսկ Մարտիրոսին՝ չորրորդ, քանի որ Մարտիրոսը Մեհմեդ II-ի ժամանակակիցն է (*Հ. Տեր-Անդրեասյան*, Շողակաթ, 1995, էջ 99): Դեռևս մինչև Կ. Պոլսի գրավումը այնտեղ կային երկու եպիսկոպոսներ: 1433 թ. Հովհաննես եպիսկոպոսը Կ. Պոլսի հայության հովանավորն էր, իսկ Եսային՝ Կ. Պոլսի հայոց եկեղեցու հոգաբարձուն: Հավանաբար այդպես է եղել նաև քաղաքի գրավումից հետո, երբ առաջինի փոխարեն նշանակվել է Հովակիմը, իսկ երկրորդի փոխարեն՝ Մարտիրոսը, որը 1459 թ. հիշատակվում է իբրև հայրապետ (***Ակինյան Ն.***, Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքության սկզբնավորությունը (Հանդես ամսօրյա, 1951, N 8-10, էջ 462), ***Ալպոյաճյան Ա.,*** Իսթանպուլի հայոց հոգևոր վարչության սկզբնավորությունը (Շողակաթ, 1962, N 2, էջ 27):

[40] **Babianger F**., *նշվ. աշխ., էջ 197:*

[41] Երեմիա Չելեպիի «Տարեգրական պատմութիւն» (Բազմավեպ, 1902, N 8, էջ 367-369):

[42] Բաբգեն եպ., Կ. Պոլսի հայ պատրիարգության ծագումը եւ առաջին պատրիարք Հովակիմ եպիսկոպոս (Հանդես ամսօրյա, 1924, N 9-10, էջ 440):

[43] **Խառատյան Ա.,** Կ. Պոլսի հայ պատրիարքության կազմավորման շուրջ (XV-XVII դդ.) Լրաբեր հասարակական գիտությունների, 2000, N 1 էջ 8-23):

[44] Նույն տեղում, էջ 15:

Կան հեղինակներ, որոնք առհասարակ ժխտում են միլեթների ճանաչումը՝ դրանք համարելով առասպելներ: Այդպիսի կարծիք է հայտնում Բ. Բրաուդին: Նա պնդում է, որ Մեհմեդին առհասարակ անհրաժեշտ չէր միլեթների ճանաչումը, որ հույն և հայ պատրիարքների մասին տվյալները առասպելներ են[45]: Սրանք քննադատելի գաղափարներ են, զուրկ որոշակի հիմքից: Հունական միլեթի մասին նույնիսկ Սքոլարիոսի հուշերում կան. այդ մասին նշում են Սֆրանձին և Կրիտովուլոսը: Հերքել նրանց՝ նշանակում է հերքել Կ.Պոլսի գրավմանը վերաբերող ամեն մի փաստարկ, քանի որ ժամանակի հիմնական կոթողները սրանք են եղել: Միլեթների ճանաչումը բխում էր իր իսկ՝ Մեհմեդ II-ի շահերից: Պետական կուռ կառավարման համակարգ ստեղծելով՝ նա հոգևոր առաջնորդներին իրավունքներ է տվել, սակայն սահմանափակ չափերով:

Միլեթների ճանաչման մասին փաստացի ֆերմաններ չեն պահպանվել[46], հավանաբար նորից հրդեհների և այլ աղետների պատճառներով, սակայն այս պարագայում պակաս անփոխարինելի չեն նաև սկզբնաղբյուրները:

Կ. Պոլսի հույն և հայ գաղութների ձևավորումը կատարվում էր միաժամանակ: Միմյանց հարևանությամբ ապրող այս ժողովուրդները շատ ընդհանուր բաներ ունեին և մշտապես փոխհարաբերվում էին միմյանց: Նրանց միջև բախումները հիմնականում լինում էին տեղական իշխանության հրահրմամբ, շատ ժամանակ նպատակաուղղված, որպեսզի ջլատեն քրիստոնյաների ուժերը: Մեհմեդ II-ի ֆերմանները հավասարապես տարածվում էին այս համայնքների վրա: Դրանք սկզբում հիմնականում վերաբերում էին քաղաքի բարգավաճմանը, ներքին կյանքի զարգացմանը: Պահպանվել է Ղալաթիայի հույն և հայ բնակիչներին տրված ֆերմանը, որի համաձայն՝ Ղալաթիան ստանալու էր ինքնավարություն, քրիստոնեական եկեղեցիները չէին ավերվելու, բնակչությունը կառավարությանը գլխահարկ էր վճարելու[47]:

1459 թ. սուլթանի ֆերմանի համաձայն՝ բարձրաստիճան պաշտոնյաներից յուրաքանչյուրը իր տարածքում պիտի կառուցեր մի համալիր, որ կազմված կլիներ բարեգործական հիմնարկներից (իմարեթ)՝ աստվածաբանական, դպրոց, հասարակական խոհանոց, իջևանատուն: Դրանք պիտի կառուցվեին մզկիթների շուրջ և ասպարեզ էին բացելու առևտրի զարգացման համար[48]: Յուրաքանչյուր այդպիսի կառույց դառնալու էր նոր թաղամասի միջուկ: Նման իրավունքներ ունեին նաև ժամանակին Մեհմեդ II-ին կամավոր հանձնված բարձրաստիճան հույները, որոնք կառուցեցին հոյակապ դղյակներ, զարկ

---

[45] **Braude B.,** *նշվ. աշխ., էջ* 78:

[46] Մեհմեդ II-ի արձակած հրամանները չեն պահպանվել: Ներքին կյանքի, բնակչության, հողային իրավունքների մասին օրենքները լուսաբանել է Ա. Ս. Տվերիտինովան (*Аграрный строй Османской империи XV-XVII вв., Документы и материалы под ред. Тверитиновой А. С., М., 1963*):

[47] ***Ապաճյան Գ.,*** Բյուզանդիոն եւ իր քաղաքական ու զինվորական կացությունը գրավում են առաջ (Շողակաթ, 1953, էջ 127):

[48] **Kritovulos,** *նշվ. աշխ., էջ 94*, **Inalcik H.,** *The Ottoman Empire: Conquest, Organization and Economy, London, 1978, p. 237.*

տվեցին առևտրին և արհեստներին: Մեհմեդ II-ի նպատակն էր քաղաքը դարձնել առևտրի խոշոր կենտրոն, ավելացնել Կոստանդնուպոլսի փայլն ու հմայքը, այն դարձնել գիտության ու մշակույթի, արհեստի և առևտրի օջախ: Նրա հրամանով կառուցվեցին բաղնիքներ, շուկաներ, պանդոկներ, արհեստանոցներ, պաշտամունքի կառույցներ: Նրա նպատակն էր քաղաքը դարձնել ամեն առումով, ինչպիսին որ այն տարիներ առաջ էր՝ ուժի, հպարտության, ճոխության, գիտության քաղաք: «Նա աշխատանքի համար ընտրում էր ամենաթանկ ու հազվագյուտ նյութեր, նաև հոգ տանում՝ ամենալավ որմնադիրներ, քարտաշներ, հյուսներ գտնելու»[49]: Ջանախնդիր Կրիտովուլոսը ամեն կերպ մեծարում է նվաճողին՝ ընդգծելով նաև, որ նա կարևոր պաշտոններ էր տալիս օգտակար մարդկանց, քաղաքի շրջակա տարածքում ապրողներին բաժանում էր հացահատիկ, լծկան, որպեսզի տրվեին գյուղատնտեսությանը[50]:

Կրիտովուլոսի թուրքամետության մասին նշել են մի շարք պատմաբաններ, նաև Զ. Ուդալցովան իր քննադատական հոդվածում, ուր վեր է հանվում հույն Կրիտովուլոսի հիացմունքը Մեհմեդ II-ի և նրա կատարած «բարեգործությունների» նկատմամբ[51]: Հունարեն գրականությունում ևս քննադատվում է Կրիտովուլոսի թուրքամետությունը: Դա պատճառ դարձավ, որպեսզի նոր ժամանակի հույն պատմագիտությունը բացասաբար գնահատի նրան[52]: Որպես սկզբնաղբյուր, սակայն, նա արժեք ունի, քանի որ լրացնում է Սֆրանձիի, Դուկասի, Խալկոկոնդիլասի հիշողությունները: Նրա շարադրանքը քարոզչության է վերածվում, որովհետև անտեսում է, որ Մեհմեդը նվաճող է ու դաժան տիրակալ, որը կոտորել ու կողոպտել է շատ ժողովուրդների, բազում բնակավայրեր ավերել և հեղեղել արյամբ[53]:

Մեհմեդի կազմակերպած զանգվածային գաղթերի հետևանքով Կ. Պոլսում առաջանում էին հայկական, հունական, հրեական թաղամասեր: Հաճախ մի բնակավայրից տեղահանվածները ապրում էին նույն թաղամասում: Հրեաները բնակվեցին Խասքյոյ թաղամասում[54], հույները՝ Ղալաթիայում, Ֆեներում, որտեղ և գտնվում էր նրանց պատրիարքանիստ եկեղեցին: Սքոլարիոսին պատրիարք նշանակելու ժամանակ Մեհմեդ II-ը նրան տվել էր Ս. Առաքյալների եկեղեցին, սակայն Սքոլարիոսի խնդրանքով նա շուտով

---

[49] **Kritovulos**, *նշվ. աշխ., էջ* 140-142:

[50] **Inalcik H.,** նշվ. աշխ., էջ 148:

[51] **Удальцова З. В.,** *Предательская политика феодальной знати Византии в период турецкого завоевания (Византийский временник, N 7, 1953, с. 93-121).*

[52] *Μεγαλη Ελληνικη Εγκυκλοπαιδεια, τομοσ 13, σ. 248,* Կրիտովուլոսի թուրքամետության մասին է նշում Վ. Ա. Գորդլևսկին (**Гордлевский В. А**., *Избранные сочинения, т. 4, М., 1968, с. 21).*

[53] Մեհմեդ II-ի կազմակերպած 1464 թ. գաղթի և դաժանությունների մասին է նկարագրում Գ. Այվազովսկին (*Այվազովսկի Գ., նշվ.* աշխ., էջ 175-176):

[54] **Гордлевский В. А.**, *Избранные сочинения, т. 4, с. 36.* Հայկական և հունական թաղամասերի մասին տե՛ս ***Խաչկոնց Դ.***, Կ. Պոլսոյ հայ գաղութին ծագումը. Ընդարձակ օրացույց ազգային հիվանդանոցի, 1902, էջ 188-190, ***Պերպերյան Հ.***, Իսթանպուլի Ս. Սարգիս եկեղեցիները (Շողակաթ, 1962, N 2, էջ 43), ***Պերպերյան Հ.***, Իսթանպուլի հայ բնակչությունը քաղաքի գրավումեն մինչև Ֆաթիհ Մեհմետ Բ–ի մահը (1453-1481): Հանդես ամսօրյա, 1962, N 1-4, էջ 411):

տեղափոխվել է Ֆեներ թաղամասի Պամմակարիստայի նախկին կուսանոցի տաճարը[55]: Ըստ Էվլիա Չելեբու՝ Իզմիրի ժողովուրդը բնակվում էր Բյոյուք Ղալաթայում, կարամանցիները՝ Բյոյուք և Քյուչուք Կարամանում, գալիպոլցիները՝ Թերսանեում[56]: Կաֆայի գրավումից հետո այնտեղի բնակիչների մի մասը հաստատվեց Էդիրնեգափուի և Պալաթի միջև (հետո թաղամասը կոչվեց Քեֆելի մահալլեսի), մյուս մասը՝ Կետիք փաշա թաղամասում[57]:

Սկզբնական շրջանում կառավարության կողմից հույներին տրված իրավունքներն ու արտոնությունները մի նպատակ էին հետապնդում՝ ծաղկեցնել Օսմանյան կայսրության մայրաքաղաքը: Սակայն դրանք ժամանակավոր էին: Մեհմեդ II-ը, հակառակ իր խոստմանը, քանդում էր հունական եկեղեցիները և դրանց տեղում մզկիթներ կառուցում[58]: Հունաբնակ թաղամասերը համալրվում էին թուրքերով, որոնք աստիճանաբար դուրս էին մղում տեղացիներին: Քիչ չէին նաև քրիստոնյաների միջև ծագած վեճերը, որ հրահրվում էին նպատակայնորեն: Այդպիսի նպատակ էր հետապնդում Մեհմեդ II-ը այն ժամանակ, երբ հույներից եկեղեցիներ էր վերցնում ու տալիս հայերին: Քաղաքում կատարվող հսկայական շինարարական աշխատանքների հետ միասին նա կարող էր հայերին թույլ տալ իրենց համար եկեղեցիներ կառուցել: Սակայն Մեհմեդն անհրաժեշտ է համարում թշնամացնել տնտեսապես միմյանց հետ մրցակցող հայերին ու հույներին: Հայերին տրված եկեղեցիների մասին կան մի շարք հակասական կարծիքներ, սակայն ճշգրտված են այն չորս եկեղեցիները, որոնք տրվել են հայերին: Սամաթիայում բնակվող հայերը Մեհմեդ II-ից ստացան Սուլու Մանաստրի Ս. Գեորգ եկեղեցին (նախկին Պերիբլեպտոս)[59]: Ֆ. Բաբինգերի կողմից հրատարակվել է «Մեհմեդ II-ի թուղրան» վերնագրով հրովարտակը, որը վկայում է, որ Սուլու Մանաստրի մարհասա Գրիգորը հայտնել է վանքապատկան հողերում Ակքերմանից եկած հայ գաղթականների բնակվելու մասին: Հետագա ուսումնասիրությունները պարզել են, որ թուղրան ոչ թե Մեհմեդ II-ի, այլ Սուլեյման I-ի ժամանակ է գրվել: Հրովարտակում նշված Գրիգոր եպիսկոպոսը

---

[55] ***Քէօսիւրճեան Ե.***, Ստամպոլոյ պատմութիւն, Վիեննա, 1913, էջ 39-40: Ե. Քյոմուրճյանը, սակայն, չի նշում պատրիարքի տեղափոխության պատճառը: Թուրքերը չէին հանդուրժում իրենց թաղամասում քրիստոնյա եկեղեցու գոյությունը: Իրավիճակը լարվում է, երբ պատրիարքարանի բակում թուրքի դիակ են հայտնաբերում; Գենադիոսը, հասկանալով իրավիճակի սրությունը, նախընտրում է տեղափոխվել հունաբնակ Ֆեներ թաղամասը (**Гордлевский В. А.**, *նշվ. աշխ., էջ* 21-22, **Рансимен С.**, *նշվ. աշխ., էջ 141):*

[56] ***Ապաճյան Գ.***, Ո՞ւր և ինչպե՞ս զետեղվեցան գրավումեն վերջ Իսթանպուլ բերված հայ գաղթականները (Շողակաթ, 1953, N 9-10, էջ 258):

[57] Նույն տեղում:

[58] **Гордлевский В. А.**, *նշվ. աշխ., էջ 25:*

[59] Մեհմեդ II-ի կողմից հայերին տրված եկեղեցիների և հայ-հունական եկեղեցական հարաբերությունների մասին տե՛ս ***Խառատյան Ա.***, Հայ-հունական եկեղեցական հարաբերությունները Կ. Պոլսում (Պատմա-բանասիրական հանդես, 2004, N 1, էջ 49-62):

պաշտոնավարել է Սուլեյման I-ի տարիներին[60]: Մեհմեդ II-ը հայերին տվեց նաև Ս. Նիկողայոսը[61] (նախկին Մանուելի մենաստան) և Ս. Սարգիսը (Այա Թեոդոսիա թաղում)[62]:

Հետագայում Օսմանյան կայսրությունում եկեղեցիների գոյությունը սպառնալիքի տակ է դրվել, մեծաթիվ եկեղեցիներ է ավերել Սելիմ I-ը[63]: Եկեղեցիների ոչնչացման մասին վկայում են վավերագրերը, որոնցից մեկի համաձայն՝ 1564 թ. Կ. Պոլսի կադիին ուղղված հրամանագրով պիտի ավերվեր Սամաթիայի եկեղեցիներից մեկը: Կառավարությանը հղված խնդրագրում քրիստոնյաները, նշելով, որ այդ եկեղեցին իրենց Մեհմեդ II-ն է տվել, և այն որպես հին եկեղեցի, նույնիսկ Սելիմի ժամանակ չի ավերվել, խնդրում են չավերել այն[64]:

XV-XVII դդ. Օսմանյան կայսրությունում ստրկությունը մեծ տարածում է գտել: Մեհմեդ II-ը իր նախնիների նման կիրառել է մանկահավաքության սկզբունքը (դեվշիրմեն)՝ իր բանակը համալրելու նպատակով[65]: Հատկապես մեծաթիվ հավաքներ են կատարվել հույներից: Դրա մասին կան հունական մի քանի փաստաթղթեր, համաձայն որոնց մանկահավաքներ են կազմակերպվել Մորեայից, Ռոդոսից, Փոքր Ասիայից, Տրապիզոնից[66]: Դեվշիրմեի է ենթարկվել մեկ միլիոն հույն երեխա: Գերմանացի գիտնական Հերցբերգը ենթադրում է, որ դրա արդյունքում հույների թվաքանակը կրճատվել է երեք միլիոնով[67]: Եթե դեվշիրմեն սովորաբար իրականացվում էր երեք-հինգ տարին մեկ անգամ, ապա XVI դարում հունական բնակավայրերում այն իրականացվում էր ամեն տարի: Բանակի շարքերը համալրելուց հետո տեղահան եղած գերիներին վաճառում էին շուկաներում[68]:

---

[60] ***Պերպերյան Հ.,*** Օսմանեան քանի մը վավերագրեր Իսթանպուլի հայոց եկեղեցիներեն ոմանց մասին (Հանդես ամսօրյա, 1961, N 10-12, էջ 26), նույնի՝ Սեպհականութեան վեճ մը Սուլու Մանասթըրի վերաբերյալ (Շողակաթ. 1962, N 2, էջ 44):

[61] ***Պերպերյան Հ.,*** Իսթանպուլի հայ բնակչությունը քաղաքի գրավումեն մինչեւ Ֆաթիհ Մեհմեդ Բ–ի մահը (1453-1481թթ.) Հանդես ամսօրյա, 1962, N 1-4, էջ 411):

[62] ***Պերպերյան Հ.,*** Իսթանպուլի առաջին հայ եկեղեցիները և Ս. Գեորգ պատրիարքանիստ եկեղեցին (Շողակաթ, 1962, N 2, էջ 47):

[63] Սելիմ I-ի հրամանով պիտի ավերվեին քրիստոնեական եկեղեցիները: Դրանք փրկելու համար հույն պատրիարք Թեոլեպտոսը Սելիմին հիշեցրել է Մեհմեդ II-ի խոստումը, որ այլևս ոչ մի եկեղեցի չի ավերվելու: Սելիմը նրանից գրավոր ապացույց է պահանջել, սակայն պատրիարքը, գրավոր ոչ մի փաստաթուղթ չունենալով, որպես վկա է ներկայացրել երեք զառամյալ ենիչերիների, որոնք հաստատել են պատրիարքի պնդումները: Դրանից հետո Սելիմը ոչ թե ավերել է եկեղեցիները, այլ նույնիսկ հույներին թույլ է տվել նոր եկեղեցի կառուցել (***Այվազովսկի Գ.,*** նշվ. աշխ., էջ 303-304, **Рансимен С.,** *նշվ. աշխ., էջ* 174):

[64] ***Փափազյան Ավ.,*** Թուրքական վավերագրերը Հայաստանի և հայերի մասին (16-19-րդ դարեր), Ե., 1999, էջ 209:

[65] ***Անասյան Հ.,*** *XVII* դարի ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում, Ե., 1961, էջ 31:

[66] **Vryonis S.,** *Byzantium: Its Internal History and Relations with the Muslim World. London, 1971, p. 435-443.*

[67] *Μεγαλη Ελληνικη Εγκυκλοπαιδεια, τομοσ 10, σ. 292.*

[68] ***Զուլալյան Մ. Կ.,*** «Դեվշիրմե»-ն (մանկահավաքը) Օսմանյան կայսրության մեջ ըստ թուրքական և հայկական աղբյուրների (Պատմաբանասիրական հանդես, 1959, N 2-3 էջ 249):

Կան թուրք հեղինակներ, որոնք ստրկության խայտառակ երևույթն արդարացնելու տեսանկյունից են նայում թուրքերի կատարած մանկահավաքությունը: Ս. Վրիոնիսը քննադատում է Թուրգութ Օզալին, քանզի վերջինս նշում է, որ քրիստոնյաները նույնիսկ հպարտ էին, որ իրենց երեխաները ենիչերի են դարձվում, քանի որ դրանով լուծվում է նրանց ապագայի և հեղինակության հարցը[69]: Մինչդեռ հունական և հայկական վավերագրերում քիչ չեն այնպիսի տողերը, որոնք արտահայտում են խոր ցավ և կսկիծ՝ ժողովրդին պարտադրված այդ իսկական դժբախտության համար:

Խտրականությունը, որը դրված էր մուսուլմանների և ոչ մուսուլմանների միջև՝ երևում էր կյանքի բոլոր բնագավառներում: Ստամբուլի խասերին վերաբերող օրենքները բացահայտորեն նկարագրում են այնտեղ բնակվող հայերի և հույների իրավազուրկ վիճակը[70]: Սուլթանին պատկանող այս հողերին կցված գերիներն անվանվում էին օրթաքչի-կուլեր: Նրանք աշխատում էին կիսարարության սկզբունքով, իսկ նրանց հողը, աշխատանքի գործիքները պատկանում էին տիրոջը[71]: Մահացած օրթաքչիի կնոջ և երեխաների ճակատագիրը տնօրինելու իրավունքը պատկանում էր տիրոջը[72]:

Օսմանյան կայսրությունում նախապես ռայա էին կոչվում բոլոր հողագործները, հետո միայն անհավատ՝ «գյավուր» տարրերը: Սուլթան Սուլեյման I-ը օրենքներ է մշակել ռայաների իրավունքների մասին, համաձայն որոնց՝ պոլսաբնակ ռայային խստիվ արգելվում էր նույնիսկ տեղափոխվել: XVI դարում ռայաները հողի նկատմամբ ժառանգական իրավունք ունեին, սակայն չէին կարող այն ինքնակամ վաճառել կամ փոխանակել[73]: Հարկային ծանր քաղաքականության պատճառով սնանկանալով՝ շատ հույներ տեղափոխվում էին Եվրոպա, Ռուսաստան և այլուր[74]:

Թուրքական վավերագրերում սուր էր դրված հայի, հույնի, հրեայի տարազի հարցը: Նրանք արտաքնապես պիտի տարբերվեին մուսուլմաններից[75]: 1662 թ. Կ. Պոլսում սուլթանը գլխատել տվեց մի հայի, որը դեղին մեստ (մույկ) էր հագել, քանի որ քրիստոնյաներին խստիվ արգելված էր դեղին գույնի հանդերձանք և կոշիկներ հագնել[76]: Սկզբնական շրջանում տրված մի քանի ազատություններն աստիճանաբար վերանում էին, իսկ եկեղեցիների լինել-չլինելու հարցը սրությամբ էր դրվում: 1661 թ. աճուրդի հանվեցին հունական, հրեական ու հայկական ազգային սեփականությունները, սակայն հույներն ու հայերը, վճարելով պահանջված գումարը, փրկեցին այն: Այդուհանդերձ, 1662

---

[69] **Vryonis S.,** *The Turkish State and History. New York, 1992, p. 6.*

[70] *Аграрный строй Османской империи XV-XVII в., с. 174-191.*

[71] **Новичев А. Д.,** *Рабство в Османской империи в средние века (Проблемы социальной структуры и идеологии средневекового общества (межвузовский научный сборник), вып. 2, Л., 1978, с. 32, 67).*

[72] *Аграрный строй Османской империи, с. 182-183.*

[73] Նույն տեղում, էջ 33, 50:

[74] **Βακαλοπουλοσ Α.**, *նշվ. աշխ., էջ 67:*

[75] *Փափազյան Ավ., նշվ.* աշխ., էջ 222:

[76] *Օրագրութիւն Երեմիա Չելէպի Քէօմիւրճեանի.* Երուսաղէմ, 1939, էջ 399-400:

թ. արքունական հրամանով մեծաթիվ հունական և հայկական եկեղեցիներ ավերվեցին[77]:

Առավել բարենպաստ պայմաններում էին ապրում արհեստավորները, որոնց աշխատանքը խրախուսվում էր սուլթանների կողմից: Կ. Պոլսում առկա արտոնությունների շնորհիվ շատ արհեստավորներ ինքնակամ տեղափոխվում էին մայրաքաղաք ու մտնում էսնաֆությունների մեջ: Հեղինակները նշում են, որ XV դարում Կ. Պոլսում շատ կային այդպիսի կորպորատիվ կազմակերպություններ[78]: Եվրոպացիների հետ կապ ունեին կաշվի և բրդի առևտրով զբաղվողները: Որոշ համքարություններում, հատկապես այնտեղ, ուր կահույք ու սարքավորումներ էին արտադրում, գերիշխում էին հույները: Կ. Պոլսում աչքի էին ընկնում հույն շինարարների կառուցած տները[79]: Արտադրանքի, վաճառքի, շուկայական հարաբերությունների որոշման և շատ այլ հարցերում հայ և հույն էսնաֆությունները մշտապես շփման և փոխկապվածության մեջ էին[80]: Ֆինանսական կապիտալը պատկանում էր հայ, հույն, հրեա դրամատերերին, որոնք XVII դարում իրենց ձեռքում էին կենտրոնացրել բանկային գործառույթները: Դրանից առաջ ձևավորվել էին պոլսահայ բուրժուազիայի երկու ուղղությունները՝ չելեբիությունը և խոջայությունը[81]:

Մի շարք փաստաթղթերի համաձայն՝ Կ. Պոլսի հայ, հույն, հրեա բնակիչները բողոքել են ծանր հարկային քաղաքականությունից: Նրանք պահանջել են հարկերից թեթևացում՝ որպես հմուտ ձկնորսներ, նավաշինարարներ, արքունական վաճառականներ, արծաթե և ոսկե թելեր արտադրողներ[82]: Սակայն օսմանյան կառավարության գանձարանը հարստանում էր հատկապես գանձվող հարկերից: Փաստաթղթերում քիչ չեն վկայությունները՝ քրիստոնյա վաճառականների և տեղական իշխանությունների միջև հարկերի պատճառով վեճերի մասին: Այդպիսի մի վեճ առաջացավ 1650 թ.՝ հայ թելավաճառների և իշխանությունների միջև[83]:

Հաշվի առնելով այն աղբյուրները, որոնք խոսում են XV դարում Օսմանյան կայսրությունում ապրող ժողովուրդների տնտեսական կյանքի մասին, վիճահարույց է դառնում Կրիտովուլոսի նկարագրած Մեհմեդ-բարերար հասկացությունը, քանի որ Օսմանյան կայսրության, հատկապես նրա մայրաքաղաքի ծաղկումն ու բարգավաճումը կատարվել է շատ ժողովուրդների արյան ու կյանքի, գերեվարության, կողոպուտի գնով:

Փաստ է, որ Մեհմեդ II-ի մի շարք գործողությունների շնորհիվ Կ. Պոլիսը դարձավ առևտրի, արհեստի ու կրթության կենտրոն: Նրա կառավարումից ի

---

[77] *Անասյան Հ., նշվ.* աշխ., էջ 29:

[78] Βακαλοπουλοσ Α., նշվ. աշխ., էջ 56:

[79] **Mantran R..,** *Foreign Merchants and the Minorities in Istanbul during the Sixteenth and Seventeenth Centuries (Christians and Jews in the Ottoman Empire, London – New York, 1983, p. 130).*

[80] **Аджян А., Зулалян М. К.,** *Ремесленное производство в Стамбуле в первой половине XVII века (Страны и народы Ближнего и Среднего Востока, X, Е., 1979, с. 163-198).*

[81] ***Անասյան Հ.,*** նշվ. աշխ., էջ 59-60:

[82] **Faroghi S.,** *Towns and Townsmen of Ottoman Anatolia Trade. Crafts and Food Production in an Urban Setting (1520-1650), Cambridge, 1984, p. 237*

[83] Նույն տեղում, էջ 28:

վեր հրեա, հայ, հույն և մասամբ մահմեդական վաճառականները տարբեր տեսակների ապրանքներ ու բնական մթերքներ էին բերում Օսմանյան կայսրության նավահանգիստներ: Ներմուծվում էին համեմունքներ, ներկեր, շաքար, հագուստներ[84]: Լեվանտի ձկնեղենը, ծովային կենդանիների, գինիների առևտուրը, նավաշինությունը, նավագնացությունը հույների մենաշնորհն էր: Շնորհիվ միջնորդավորված առևտրի լայն ցանցի՝ սևծովյան և միջերկրածովյան նավահանգիստներում հույները կարողացան ակնառու դիրքերի հասնել թե՛ ծովում և թե՛ առևտրում: Կ. Պոլսի հույներին էր պատկանում պանդոկների, գինետների մեծ մասը:

Սևծովյան առևտրում գերիշխող էին հույն և հրեա առևտրականները, իսկ Կիլիկիայում և Ակքերմանում հայտնի էին հայ, հույն, թաթար առևտրականները, որոնք արտահանում էին տակառներով աղ դրած ձողաձուկ:

Օսմանյան կայսրությունում հույները կապ ունեին արևմտյան վաճառականների հետ, նրանց թարգմանիչներն էին և հիմնական ապրանքների մատակարարողները: Նավատեր հույները միջազգային առևտրին մասնակցում էին իրենց սեփական նավերով: Հույների մի զգալի մասը գործում էր նաև լումայափոխության բնագավառում[85]:

Կ. Պոլսի հունական համայնքի ձևավորումը միանգամից տեղի չունեցավ. դրա համար շատ տարիներ էին հարկավոր: Մեհմեդ II–ի հաջորդների օրոք ևս բռնագաղթեր կազմակերպվեցին, որոնց հետևանքով Կ. Պոլսի հունական համայնքն ավելի ընդլայնվեց:

ИЗ ИСТОРИИ ГРЕЧЕСКОЙ ОБЩИНЫ КОНСТАНТИНОПОЛЯ (XV-XVII ВВ.)

БРУТЯН М. А.

Резюме

1453 г. знаменуется не только падением Константинополя, но и созданием армянской колонии. В целях процветания столицы своей империи Мехмед II переселил сюда многих армянских, греческих, еврейских ремесленников и торговцев с их семьями, из Мореи, Аргоса, Коринфа (1458-63), Митилены, Евбеи (1470), Крыма (1475), Карамании (1468-74). Из этих населенных пунктов были переселены также армяне, евреи и отчасти цыгане.

Для христианского народа большое значение имело также признание греческих и армянских миллетов, в результате были назначены греческий патриарх (1454) и армянский духовный предводитель (1461).

Благодаря политике Мехмеда II в Константинополе быстрыми темпами стали развиваться ремесленничество, торговля и строительство. Константинополь стал не только греческой и армянской колонией, но и центром искусства и науки.

[84] **Inalcik H.**, *նշվ. աշխ., էջ XI, 139:*
[85] **Mantran R.,** նշվ. աշխ., էջ 133: